ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Ε/40/187-26 առ «30» 01 2026թ.

«ԷԼՍԵ» ՍՊԸ
տնօրեն
Ս. Ավետիսյանին

(Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-178/24-9-01/440 պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին)

Հարգելի՛ տիկին Ավետիսյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար հանդերձանքի ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-178/24» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «ԷԼՍԵ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի դեկտեմբերի 24-ին կնքվել է (թիվ 19, 23, 30, 36 և 37-րդ չափաբաժիններով) №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-178/24-9-01/440 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագրի կնքման օրվանից 80 օրացուցային օրվա ընթացքում»: Սակայն մինչ օրս Պայմանագրի հավելված 1-ով 23-րդ չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքը Ձեր կողմից մատակարարված չէ:

Պայմանագրով սահմանված է.

- 1.1 կետ՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և տվյալ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք) ...»:

- 2.1.7 կետ՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

- 2.4.1 կետ՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ԷԼՍԵ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-178/24-9-01/440 պայմանագիրը 23-րդ չափաբաժնով և առաջարկում եմ ծանուցվելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (121 800 ՀՀ դրամ) և որակավորման ապահովումները (182 700 ՀՀ դրամ):

Հարգանքով՝

ԳՏՏ-ԸՀՏ Ս. Մաթևոսյան

Կազմեց՝
Հ. Ռամազյան
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հեռ. 010-20-04-91